

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01
վիճակագրության պետական խորհրդի նիստի

21.01.2011թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ա.Շաբոյան, Ս.Դավթյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Սիրգոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ս. Պողոսյան (իրավաբանական բաժնի պետ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Լ.Մարկոսյան (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ):

Օրակարգի նախագծում՝ երկու հարց.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագրքով տվյալների բազան ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Երևանյան գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Չեկուցող՝ Լ.Մարկոսյան/

2. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները-կողմ՝6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

«Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագրքով տվյալների բազան ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Երևանյան գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Չեկուցող՝ Լ.Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Երևանյան գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ